

Ծըռէ՛ եւ տե՛ս. Ողորմութեանդ սըտութիւնն
 Յոն վարը, տե՛ս. գիւղե՛ր, գիւղե՛ր եւ գիւղե՛ր
 Կը հըրդեհուին, եւ բոցն իրենց կը հասնի
 Արարատէն բարձըր եւ բարձը՛ր քեզմէ.
 Ահաւասիկ դաշտերուն մէջ խանձոտած
 Յագարաւոր խոցուածներ
 Իրենց շարդուած կողերն ընդքարշ կը տանին.
 Մեր ոսկըրները կրակին մէջ ճերմըկցած
 Կը պատրաստեն ալիւրն ահա նըշխարքիդ,
 Եւ մեր արիւնն յորդաբուխ
 Կու գայ մինչեւ քու ըսկիհներդ լեցնել.
 Ճամբաներուն վըրայէ
 Կը լըսուի ճռի՛նչը թըշնամի սայլերուն՝
 Որոնց մէջ մեղրն ու կաթը մեր կը կըրեն,
 Արիւնը մեր արեգակին, կեանքն հողին
 Եւ արծաթները Սեղանիդ նըւիրուած:
 Վար նայէ, հո՛ն, մեր թոնիրները բուր
 Իրենց զըւարթ բոցին վըրայ կը փըլչին,
 Եւ կը մարի ծուխն հայրենի ծըխանին,
 Եւ կը լըռէ մըշակներուն երգն հանդարտ.
 Ամէն հասկ իր քիստերէն վար կը կաթէ
 Արիւն, ամէն աղբիւր անցած ճամբուն վրայ
 Կը լըւայ վերք մ՛ու ամէն
 Յովագ դիակ մը դէպ որջն իր կը քաշէ.
 Իսկ կիներն հոս իրենց ծունկին վրայ կու լան
 Երիտասարդ գըլուխներ.
 Եւ մանուկներն ահաբեկ,
 Երեխաներն անօթի
 Չը գըտնելով մօր ծիծերուն մէջը կաթ՝
 Չերդ նըշենւոյ ծաղկած ճիւղերը կիսաբեկ՝
 Կը մեռնին չոր ըստինքներէ վար կախուած: